ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի մարտի 24-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Օդային եղանակով նյութերի ցրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026 թվականի մարտի 23-ին ժամը 13:16:52-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2026 թվականի մարտի 24-ին ժամը 17:00-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Հանձնաժողովի հարգելի անդամներ,
հաշվի առնելով, որ արտադրողականության գնահատման հստակ մեթոդաբանության բացակայությունը կարող է հանգեցնել հայտերի սուբյեկտիվ գնահատման, խնդրում ենք տրամադրել հստակ և չափելի գնահատման չափանիշներ՝ ապահովելու գործընթացի թափանցիկությունն ու մրցակցության հավասար պայմանները:

Պարզաբանում N : «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով մրցույթի հրավերով որակավորման չափանիշների գնահատման պահանջ սահմանված չէ, հետևաբար արտադրողականության սուբյեկտիվ գնահատումը բացառվում է:
Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված արտադրական չափորոշիչների պարզ թվաբանական հաշվարկի մեթոդով մասնակիցը հնարավորություն ունի գնահատելու իր արտադրական կարողությունները: Ուստի, գնահատման հստակ մեթոդաբանության առկայության դեպքում մրցույթի պահանջները կլինեին խտրական և կձևավորեին մրցակցության անհավասար պայմաններ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին:**

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով